

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«01» հուլիսի 2024թ.

2024 թվականի հունիսի 28-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2023 թվականի գործունեության հաշվետվության հաստատում.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական հաշվետվության հաստատում.

3. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» բյուջետային ծրագրի «11004. Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման 2024 թվականի նախահաշվի փոփոխության հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ
Ե. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
Ա. Հովհաննիսյան	ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Ա. Ադիլխանյան	ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ

Ա. Զոհրաբյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, ՀԽ անդամ

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Ավանեսյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Ն. Տերյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Գ. Խաչատրյան

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 0 դեմ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2023 թվականի գործունեության հաշվետվությունը.

2. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունը.

3. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» բյուջետային ծրագրի «11004. Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման 2024 թվականի նախահաշվի փոփոխությունը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Գ. Սանոսյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան